



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2025 թվականի N 625-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Դավիթ Դոխոյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոց, թիվ 58 հասցեում 2025 մայիսից զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Դավիթ Դոխոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 15
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2025 թվականի N 624-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Ռազմիկ Գասպարի Վարդանյանի և Սառա Գասպարի Վարդանյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Ռազմիկ Գասպարի Վարդանյանին և Սառա Գասպարի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 15 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված կառուցապատված 178,0 քառ.մետր մակերեսով թիվ 1 բաժանվող մասին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, Հ. Մելքոնյան փողոց, 2-րդ փակուղի, թիվ 15/1, թիվ 2 մնացող կառուցապատված մասին՝ 662,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, Հ. Մելքոնյան փողոց, 2-րդ փակուղի, թիվ 15:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Ռազմիկ Գասպարի Վարդանյանին և Սառա Գասպարի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 15
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մայիսի 2025 թվականի N 623-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Հուսիկ Յոլակի Միլիտոսյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1. Հուսիկ Յոլակի Միլիտոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի գլխավոր խճուղի թիվ 25 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման հողակտորից բաժանված 892,2 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, Գլխավոր խճուղի, թիվ 25/1, թիվ 2 առանձնացվող մասին՝ 3435,2 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, Գլխավոր խճուղի, թիվ 25:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Հուսիկ Յոլակի Միլիտոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2025 թվականի N 622-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 8-ի N 57-Ա որոշման պահանջները, **որոշում եմ.**

1. Ստեղծել Ջրվեժ համայնքում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Հայկ Վարդանյան՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

հանձնաժողովի անդամներ՝

Արմինե Պետրոսյան՝ աշխատակազմի քարտուղար,

Անահիտ Մարգարյան՝ համայնքի ղեկավարի օգնական,

Սոնա Հովհաննիսյան՝ ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ,

Վահե Սիրականյան՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Լուսինե Երիցյան՝ ավագանու անդամ,

Լիանա Սահակյան՝ «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մսուր-մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

հանձնաժողովի քարտուղար՝

Սաթենիկ Աղաջանյան՝ ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ:

2. Հաստատել հաշվետվությունների ձևերը՝ համաձայն հավելված N 1-ի:

3. Հաստատել առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելված N 2-ի:

4. Հաստատել առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելված N 3-ի:

5. Հաստատել մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 4-ի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Իրազեկման արշավի ձևը (ընդ որում միայն իրականացված տարբերակները)	Արշավի իրականացման մանրամասները և ընդգրկման շրջանակը
Համայնքապետարանների պաշտոնական էլեկտրոնային կայքում համապատասխան տեղեկության ներկայացում	- Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը - Կայքի համապատասխան բաժին այցելությունների քանակը - Տեղադրել հղումները
Սոցիալական ցանցերում տեղեկատվության ներկայացում	- Տեղեկատվության հրապարակման ամսաթիվը - Տեղադրել հղումները
ԶԼՄ-ների՝ ռադիոալիքների, թերթերի, հեռուստաալիքների օգնությամբ տարածում	- Նշել ԶԼՄ-ների անունները - Ներկայացնել արշավի բովանդակությունը - Տեղադրել հղումները
Տպագիր նյութերի՝ բուկլետների, թռուցիկների միջոցով տարածում	- Տպագրված նյութերի քանակը - Տարածման վայրերը
Պաստառների և ցուցատախտակների միջոցով տարածում	- Պաստառների և ցուցատախտակների քանակը - Տեղադրման վայրերը
Փողոցային հանդիպումներ	- Բնակավայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները - Հանդիպումների քանակը - Հանդիպումների մասնակիցների քանակը - Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները
Այցեր բնակարաններ	- Բնակավայրերը, որտեղ իրականացվել են այցերը - Տնային այցերի քանակը - Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները
Հեռախոսազանգեր	Հեռախոսազանգերի քանակը
Տարբեր հանրային վայրերում, կազմակերպություններում հանդիպումներ	- Հանրային վայրերը, որտեղ իրականացվել են հանդիպումները - Հանդիպումների քանակը - Հանդիպումների մասնակիցների քանակը - Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները
Տեղական ինքնակառավարման մարմինների, վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	- Հանրային լսումների/քննարկումների քանակը - Հանրային լսումների/քննարկումների մասնակիցների քանակը - Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները
Վարչական ղեկավարների նստավայրերում ժողովներ, լսումներ և քննարկումներ	- Բնակավայրերը, որտեղ իրականացվել են քննարկումները - Քննարկումների քանակը - Քննարկումների մասնակիցների քանակը - Տեղադրել լուսաբանման/նկարների հղումները
... ¹	

¹ Ընդհանուր առմամբ ղեկավարի 2025 թվականի մայիսի 14-ի թիվ 622-Ա որոշման հավելված N 1-ում նշված իրազեկման այլ ձևերը

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ² ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

[illegible]

² Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Առաջարկի անվանումը	Քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակը	Ծրագրի կարգավիճակը • Հաղթող ծրագիր (քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարած) • Իրականացվող ծրագիր, մեկնաբանություն ֆինանսավորման աղբյուրների մասին • Չհաղթած ծրագիր
Քվեարկության մասնակիցների ընդամենը քանակ		

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագրի անվանումը	
Ծրագիրը ներկայացնողի անուն/ազգանունը	
Ծրագրի բովանդակությունը	
Ծրագրի բյուջեն	
Իրականացման վայրը	
Շահառուների քանակը	
Իրականացման ժամանակահատվածը/սկիզբ-ավարտ/	
Ծրագրի միջոցառումները, ըստ իրականացնող մարմինների/կազմակերպությունների	
Հիմնական արդյունքային չափորոշիչները	
Հղումներ կայքում առկա տեսադարանին/նկարներին	
Այլ կարևոր ծրագրային մանրամասներ	

ՀԱՅՏ

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1.	Առաջարկի հեղինակի անուն, ազգանուն /անվանում/	
2.	Կոնտակտային տվյալներ /հասցե, հեռախոս, էլ. փոստ/	
3.	Առաջարկի անվանումը, նկարագրությունը	
4.	Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը	
5.	Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները	
6.	Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները	



Հավելված N 3

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2025 թվականի
մայիսի 14-ի թիվ 622-Ա որոշման

ԱՂՅՈՒՍԱԿ

ՋՐՎԵՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է հանրային քննարկումների և լսումների փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավար- ման մարմինների իրավասություն- ների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն ¹	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխա- նում է ավագանու սահմանած առաջնահերթությո- ւոններին	
1.		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2.								
3.								

(այդ թվում՝ համայնքի տվյալ տարվա բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ առաջարկ-նախագծերի համընկնման բացառման) և
ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը:

¹ Առաջարկը իրականացման փուլում չէ, ընդգրկված չէ համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում, տվյալ տարվա աշխատանքային պլանում և բյուջեում, չի իրականացվելու այլ կազմակերպությունների կողմից:



Հավելված N 4

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2025 թվականի
մայիսի 14-ի թիվ 622-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՋՐՎԵՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ**

N	Մասնակցային բյուջետավորման իրականացման փուլ	Միջոցառում (նկարագրել իրականացվելիք գործողությունները)	Պատասխանատու և կատարողներ	Աջակցող թիմակից- ներ	Ժամկետներ
1.	Նախապատրաս- տական փուլ	Իրավական ակտերի նախագծերի կազմման մեկնարկի նախապատրաստական փուլ	Համայնքապետարանի աշխատակազմ		14.05.2025թ.- 15.05.2025թ.
2.	Իրազեկման փուլ	1.Շրջայցեր վարչական բնակավայրերում 2. Գովազդային նյութերի պատրաստում և հրապարակում 3.Հանդիպումներ ՀՈԱԿ-ների աշխատակիցների հետ	Համայնքապետարանի աշխատակազմ		16.05.2025թ.- 27.05.2025թ.
3.	Առաջարկների ներկայացման փուլ	Քաղաքացիների կողմից ներկայացվող հայտ առաջարկների ընդունում	Համայնքի 16 տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ, հասարակական միավորումներ և քաղաքացիական նախաձեռնություններ		27.05.2025թ.- 20.06.2025թ.
4.	Առաջարկների նախնական գնահատման փուլ	Ներկայացված առաջարկների համապատասխանության գնահատում՝ սահմանված չափանիշներին համապատասխան	Հանձնաժողով		21.06.2025թ.- 24.06.2025թ.
5.	Հանրային քննարկումների և լսումների փուլ	Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկների հրապարակում և հանրային քննարկում			25.06.2025թ.- 30.06.2025թ.
6.	Առաջարկների քվեարկության փուլ	Սահմանված չափանիշներին համապատասխանող և հանրային քննարկում անցած առաջարկների քվեարկության կազմակերպում			01.07.2025թ.- 15.07.2025թ., մինչև ժամը 13:00-ն
7.	Քվեարկության ամփոփման փուլ	Հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփում			16.07.2025թ. մինչև ժամը 18:00-ն
8.	Հայտերի կազմման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագր/ ծրագրերի/ համար սուբվենցիոն հայտի կազմում, ներկայացում ՏԿԵՆ			17.07.2025թ.- 22.07.2025թ.

9.	Իրագործման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագրերի նախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարանա աշխատանքների ձեռքբերում գնումների մասին օրենսդրությանը համապատասխան			23.07.2025թ.- 10.09.2025թ.
10.	Իրականացման փուլ	Քվեարկությամբ ընտրված ծրագրերի իրագործում			11.09.2025թ.- 01.12.2025թ.
11.	Հաշվետվության փուլ	Իրագործված ծրագրերի ամփոփում, գործընթացի արդյունքների ներկայացում			02.12.2025թ.- 01.03.2026թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2025 թվականի N 621-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արթուր Ռազմիկի Սաֆարյանի (ծնված՝ 1981 թվականի մարտի 24-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի այգետարածքի 1-ին զանգվածի 25-րդ տեղամասի թիվ 12 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31102017-07-0014 վկայականը, տրված 2017 թվականի հոկտեմբերի 31-ին, «ԳԻՍ-ԱԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024BZJYVN, մուտքագրված 2024 թվականի դեկտեմբերի 24-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արթուր Ռազմիկի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի այգետարածքի 1-ին զանգվածի 25-րդ տեղամասի թիվ 12 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 2 ամառային խոհանոցը՝ ընդհանուր 105,0 քառ.մետր, թիվ 3 ջրավազանը՝ 27,4 քառ.մետր, թիվ 4 խորդանոցը՝ 15,25 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 7,1 քառ.մետր, թիվ 6 հարթակը՝ 2,6 քառ.մետր և թիվ 7, 8 պարիսպները՝ ընդհանուր 6,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արթուր Ռազմիկի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի այգետարածքի 1-ին զանգվածի 25-րդ տեղամասի թիվ 12 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1.Արթուր Ռազմիկի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Ձորաղբյուր գյուղի այգետարածքի 1-ին զանգվածի 25-րդ տեղամասի թիվ 12 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 93-րդ թաղամաս, թիվ 1:

2.Արթուր Ռազմիկի Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 93-րդ թաղամասի թիվ 1 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցված թիվ 2 ամառային խոհանոցը՝ ընդհանուր 105,0 քառ.մետր, թիվ 3 ջրավազանը՝ 27,4 քառ.մետր, թիվ 4 խորդանոցը՝ 15,25 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 7,1 քառ.մետր, թիվ 6 հարթակը՝ 2,6 քառ.մետր և թիվ 7, 8 պարիսպները՝ ընդհանուր 6,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 192 982 (մեկ հարյուր իննսուն երկու հազար ինը հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Ռազմիկի Սաֆարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2025 թվականի N 620-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 476-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով և հաշվի առնելով քաղաքացի Աշոտ Սեյրանի Պալոյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 11-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման և անշարժ գույքի վերահասցեավորման մասին» թիվ 476-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում և որոշման 2-րդ կետում «թիվ 3, 4 ծածկերը՝ 58,2 քառ.մետր» բառերը փոխարինել «թիվ 3 ծածկը՝ 22,17 քառ.մետր» բառերով:

2) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «530 165 (հինգ հարյուր երեսուն հազար մեկ հարյուր վաթսուհինգ)» բառերը փոխարինել «460 857 (չորս հարյուր վաթսուն հազար ութ հարյուր հիսունյոթ)» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 14
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2025 թվականի N 619-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 444-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով և հաշվի առնելով քաղաքացի Վարդան Արթուրի Սարգսյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 04-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման և անշարժ գույքի վերահասցեավորման մասին» թիվ 444-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում և որոշման 2-րդ կետում հանել «, թիվ 2 ծածկը՝ 22,32 քառ.մետր» բառերը:

2) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «309 632 (երեք հարյուր ինը հազար վեց հարյուր երեսուներկու)» բառերը փոխարինել «273 138 (երկու հարյուր յոթանասուներեք հազար մեկ հարյուր երեսունութ)» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 14
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 618-Ա

ՏԻԳՐԱՆ ՀՐԱՉԱՅԻ ՄԻՀՐԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1.Տիգրան Հրաչյայի Միհրանյանին տալ շվաքարանի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 2 հացեի հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Տիգրան Հրաչյայի Միհրանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 617-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արթուր Լեոնիդի Մուշեղյանի (ծնված՝ 1965 թվականի հուլիսի 2-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի Զրվեժ այգետարածքի թիվ 18 թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռ, վավերացված 2016 թվականի օգոստոսի 26-ին, «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024AQRQRM, մուտքագրված 2024 թվականի դեկտեմբերի 26-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արթուր Լեոնիդի Մուշեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի Զրվեժ այգետարածքի թիվ 18 թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 314,1 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 43,2 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 11,2 քառ.մետր և թիվ 4 պարիսպը՝ 6,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 22.1-ին կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արթուր Լեոնիդի Մուշեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի Զրվեժ այգետարածքի թիվ 18 թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Արթուր Լեոնիդի Մուշեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Աբովյանի շրջանի Զրվեժ այգետարածքի թիվ 18 թաղամասի թիվ 11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 204-րդ թաղամաս, թիվ 12:

2.Արթուր Լեոնիդի Մուշեղյանին սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 204-րդ թաղամասի թիվ 12 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման

հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 314,1 քառ.մետր, թիվ 2 լողավազանը՝ 43,2 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 11,2 քառ.մետր և թիվ 4 պարիսպը՝ 6,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Լեոնիդի Մուշեղյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 616-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ և 219¹ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արևիկ Ալբերտի Հունանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0401-0047 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ**.

1.Արևիկ Ալբերտի Հունանյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Արևիկ Ալբերտի Հունանյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3.Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Արևիկ Ալբերտի Հունանյանին:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Արևիկ Ալբերտի Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 615-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի, 219՝ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արևիկ Ալբերտի Հունանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0401-0047 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ իրականացրել է շինության կառուցման շինարարական աշխատանքներ, **որոշում եմ.**

1. Արևիկ Ալբերտի Հունանյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Արևիկ Ալբերտի Հունանյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Արևիկ Ալբերտի Հունանյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Արևիկ Ալբերտի Հունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 614-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հակոբ Գևորգի Գրիգորյանի (ծնված՝ 1983 թվականի հունվարի 18-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի 45,8 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորը փոխադրելու բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա և նշված հողակտորում կառուցված թիվ 1 օժանդակ շինության գործառնական նշանակությունը փոխելու հասարակական կառուցապատման շինությունների՝ առևտրի սրահի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02082023-07-0007, տրված 2023 թվականի օգոստոսի 2-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 100-Ն որոշումը, **որոշում եմ.**

1.Հակոբ Գևորգի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի 45,8 քառ.մետր մակերեսով հողակտորի գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հակոբ Գևորգի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում կառուցված թիվ 1 օժանդակ շինության գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման շինության՝ առևտրի սրահի:

3.Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Գևորգի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 613-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գևորգ Մուրադի Եղիազարյանին՝ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 12-րդ փողոց, թիվ 28/1 հասցեում 2025 թվականի մայիսից զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գևորգ Մուրադի Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2025 թ. մայիսի 13
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» մայիսի 2025 թվականի N 612-Ա

ՄԻՀՐԱՆ ԳԱԳԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի՝ 2025 թվականի մայիսի 13-ի զեկուցագիրը՝ Միհրան Գաղիկի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի այգեգործական զանգված, 5-րդ թաղամաս, թիվ 19,20 հասցեներում գտնվող (կադաստրային ծածկագրեր՝ 07-042-0209-0002, 07-042-0209-0001) Հարկային օրենսգրքով նախատեսված՝ 2019-2024 թվականների համար անշարժ գույքի հարկի չկատարված պարտավորության վերաբերյալ, այն է՝ 55 266 (հիսունհինգ հազար երկու հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, այդ թվում՝ 44 721 (քառասունչորս հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ ապառք, 10 545 (տասը հազար հինգ հարյուր քառասունհինգ) դրամ տույժ, **որոշում եմ.**

1. Միհրան Գաղիկի Մուրադյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

